դը լալիս, աղաղակում էր, որ չէր կարող ոտքով գնալ, իսկ դատարկ գրաստ չկար, որ նրան հեծցնեին: Ընկերները ասացին՝ դու մնա այստեղ, մինչև մենք գնանք, բեռները թափենք, քեզ համար գրաստ բերենք, քեզ տանենք գյուղ, թերևս բուժենք: Ծնկից ներքև պարանով կապեցին և քար դրին ոտքի տակ և ոտքը պարզեցին վրան, որ ուռուցքը գնա դեպի ոտքը, չանցնի մարմինը: Մեջքի վրա ընկած, թաշկինակը երեսին քաշած՝ քնեց: Ահա պիծակները թափվեցին ոտքի վրա և այնքան կծեցին, մինչև որ օձի թույնը և ուռուցքը ծծեցին, և մարդը բժշկվեց: Իսկ այն պիծակները, որոնք կծեցին, սատկեցին: Իսկ նա հավաքեց թաշկինակի մեջ որպես թե բռում, հագավ տրեխները, վեր կացավ, վազեց կարավանի հետևից, որպես թե բոլորովին վնասված չի եղել:

Եվ երբ կես ճանապարհը գնաց, ահա նրա ընկերներից մեկը ձի հեծած գալիս էր: Պատահեցին իրար, իսկ օձահարը պատմեց նրան պատահած հրաշքը: Եվ հասնելով կարավանին՝ ցույց է տալիս նրանց թաշկինակով պիծակներին: Նրանք լսելով, փառք տվին Աստծուն, որ չնչին բաներից ցավերի բժշկություն է լինում: Ինչպես թիրիակը, որ օձից է, օձահարի դեղ է, իսկ արճճաթթուն ձիեր է բժշկում, աղվեսի կուրծքը դեղ է ցավող ականջի: Ամոթ նրանց, որ ասում են, թե ինչու ստեղծվեցին այդպիսի անարգ կենդանիները:

ԳԼՈՒԽ ԼԳ
ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԱՆՔՈՎ ԴԵՎԻ ՄԱՍԻՆ

Պատմությունների կողմից գրված է, թե ջրհեղեղից հետո Նոյը սերեց Մանիտոն անունով մի որդի և Աստղիկ անունով մի դուստր: Սա, ասում են, դևերի հետ կենակցելով ծնում է (աղջիկներ), որոնց կոչում են հավերժահարսեր: Ոմանք սա համարում են առասպելներ ու սուտ, իսկ ինձ թվում է ճշմարտություն և իրավացի, որովհետև բազմաթիվ տեղերում գրված է նրանց ու մարդկանց կենակցության մասին: Քանզի *Հարանց վարքում* [140] գրված է, թե դևերը մենակյացի կերպարանք առնելով՝ լեռներից իջնում էին քաղաք, շնանում էին կանանց հետ ու վերադառնում էին լեռը: Կիրակոս վարդապետի պատմության մեջ գրված է, թե Գողթան գավառում[141] դևը կնոջ կերպարանք է առել և կենակցել է մի մարդու հետ: Այդպես էլ մեր օրերում եղավ: Մի մահմեդական ազգով Բայաթ՝ այն ցեղից, որ կոչվում է Ելիղամարլու, անունով Ապազ, այնպես լիրբ ու հայհոյիչ չէր, ինչպես մյուս մահմեդականները, այլ խուփ բերան ու լավ: Սա մի օր ձիով գնում էր Վաղարշապատի դաշտից: Հասնելով Մեծամոր[142] գետի ակունքներին, որ այժմ կոչվում է Սև ջուր, տեսնում է, որ մի կին նստել է աղբյուրի վրա. սա զարդարված էր թանկագին զգեստներով ու զարդերով: Ապազը չխոսեց, անցավ գնաց: Երբ մի քիչ հեռացավ, տեսավ իր հետևից մեկին՝ նստած ձին: Ապազն ասում է՝ ո՞վ ես դու: Դևը պատասխանում է՝ ես այն կինն եմ, որ նստած էր աղբյուրի գլխին, իսկ դու ինձ տեսար, չխոսեցիր ինձ հետ: Ապազը հարցնում է՝ այժմ ի՞նչ ես ուզում ինձնից: Դևը պատասխանում է՝ ես կամենում եմ դառնալ քո կինը: Ապազն ասում է՝ ես կին ունեմ, եթե իմ կինը տեսնի քեզ, քեզ ու ինձ կսպանի: Դևն ասում է՝ ես քո կնոջը չեմ երևա, ոչ էլ այլ մեկի, բացի քեզնից: Իմ ձայնը կլսեն, բայց ինձ չեն տեսնի: Ուր կամենաս ինձ ուղարկել, կերթամ քեզ պատգամ կբերեմ: Անվնաս կպահեմ քո հոտերը, նախիրը և քո մատակ ձիերի երամակները (այնպես), որ ոչ գող, ոչ գազան չկարողանան մոտենալ, ոչ էլ (քո անասունները) կընկնեն վտանգավոր տեղ: Քեզ կհայտնեմ (այն ամենը), ինչ որ երկրում կատարվում է: Այս բոլոր և այլ այսպիսի խոսքերով մոլորեցրեց մարդուն, իսկ սա հավանություն տալով նրան, առավ գնաց տուն:

Միշտ նրա հետ էր, մշտապես շնանում էր նրա հետ, իսկ նա (Ապազը) պահում էր ձիերի երամակները: Մի օր մատակները արածում էին, մեկը անջատվեց երամակից: Ահա երկու գայլեր հարձակվեցին նրա վրա և կամենում էին պատառոտել. մատակը վրնջաց, դևերը եկան բռնեցին գայլերին և տարան երամակների մեջ, երամակները հարձակվեցին գայլերի վրա և ոտքերով, ատամներով ծեծելով ու աքացելով սպանեցին գայլերին: Դարձյալ մի այլ օր Ապազը գնացել էր ինչ-որ տեղ, գողերը ձիերի երամակների մի ինչ-որ մաս գողացան: Ապազի կնոջը հայտնեցին: Նա ասաց՝ նրանք չեն կարող մեր ձիերը յուրացնել, եթե Ապազի կինը իմանա, կգնա նրանք կբերի: Եվ երկու օրից հետո բոլոր ձիերը եկան, իսկ նրանց հետ էր նաև մի խրոխտ ձի: